www.eaea.org www.mku.am www.dvv-international.am www.edu.am www.etf.europa.eu www.britishcouncil.am

**Միջազգային գիտաժողով**

Երիտասարդների և մեծահասակների կրթություն եւ
ցկյանս ուսումնառություն

2010թ., հունիսի 16-18, Հայաստան, Երեւան

Մասնակցության հրավեր

2010թ. հունիսի 16-18-ը, Երևանում տեղի կունենա Միջազգային գիտաժողով «Երիտասարդների և մեծահասակների կրթություն եւ ցկյանս ուսումնառություն» թեմայով , որին զու գահեռ տեղի կունենա Մեծահասակների կրթության եվրոպական ասոցիացիայի (EAEA) Գլխավոր համաժողովը: Գիտաժողովի կազմակերպչական կոմիտեն հրավիրում է մասնակցել երիտասարդների և մեծահասկաների կրթության ոլորտի տեսաբաններին եւ պրակտիկ գործիչներին այս կարևոր միջոցառմանը: Հեղինակները պետք է ներկայացնեն հոդվածի համառոտագիրը 200 բառի սամաններում (անգլերեն լեզվով) եւ հոդվածը (հայերեն, անգլերեն կամ ռուսերեն լեզվով): Ներքո բերված են գիտաժողովի թեմաները եւ հոդվածների ներկայացման պայմանները:

***Հոդվածների համառոտագրերի (միայն անգլերեն) ներկայացման վերջին ժամկետը 2010թվ. ապրիլի 30-ն է:***

***Խնդրում ենք հոդվածներրը ուղարկել***
***էլեկտրոնային փոստով***
***Գիտաժողովի կազմկոմիտեին info@mku.am էլ. հասցեով:***

# Գիտաժողովի թեմաները

Գիտաժողովի թեմաները ներառում են, բայց սահմանափակված չեն հետեւյալով.

- Ոչ ֆորմալ կրթության ինտեգրումը՝ ԵԱՇ/ՈԱՇ արդյունքները
- Ցկյանս ուսունառության ոլորտի վերջին զարգացումները (ռազմավարություն, օրենսդրական դաշտ, գործնական քայլեր, հաստատություններ)
- ՈԱՇ-ը Ցկյանս Ուսումնառության համար. զարգացումներ, խնդիրներ, ձեռքբերումներ
- Կրթության որակ
- Նախընթաց կրթության ճանաչում
- Երիտասարդների և մեծահասակների ոչ մասնագիտական կրթություն՝ քաղաքացիական, մշակութային և այլն
- Երիտասարդների և Մեծահասակների կրթության և Ցկյանս ուսումնառության մեթոդներ, հետազոտություն և պրակտիկա
- Հետազոտական մեթոդները երիտասարդների և մեծահասակների կրթության մեջ
- Երիտասարդների և մեծահասակների կրթության մեթոդների կիրառումը ակադեմիական դպրոցում
- Տեղեկատվական տեխնոլոգիաները և դասավանդումը
- Երիտասարդների և մեծահասակների կրթության տեխնոլոգիաների դերն ու գործառույթները 21-րդ դարի համալսարանում
- Հեռահար ուսուցում
- Ցկյանս ուսումնառության համայնքի զարգացումը
- CONFINTEA VI արդյունքները
- այլ

## Տեղեկություն հոդվածների ներկայացման վերաբերյալ

Խնդրում ենք հոդվածները եւ զեկույցները ուղարկել info@mku.am էլեկտրոնային փոստով, կցված MS Word կամ Adobe PDF ֆայլի տեսքով, հասցեավորելով Գիտաժողովի կազմկոմիտեին e-mail: info@mku.am :

Հոդվածների համառոտ բովանդակությունը չպետք է գերազանցի 200 բառը եւ պետք է գրված լինի անգլերեն լեզվով: Այնուհետեւ հոդվածը ներկայացվում է հայերեն, անգլերեն կամ ռուսերեն լեզուներից մեկով:

Հոդվածների համառոտ բովանդակությունը եւ ամբողջ հոդվածը խնդրվում է ներկայացնել ուղարկված օրինակների տեսքով:

Ժամկետներ՝

- Հոդվածների համառոտ բովանդակության ներկայացման վերջին ժամկետը **2010թ. ապրիլի 30**-ն է:
- Հոդվածի ամբողջական տեքստի ներկայացման վերջին ժամկետը **2010թ. մայիսի 31**-ն է:
- Գիտաժողովին մասնակցելու գրանցման ժամկետը **2010թ. մայիսի 31**-ն է:
- Հյուրանոցում տեղավորվելու համար (օտարերկրացիների համար) դիմել մինչեւ **2010թ. մայիսի 1** -ը: